ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«05» 08 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000059

Ձեռնարկողը՝ ***Քաղաքացի Արմինե Պետրոսյան***
Կոտայքի մարզ, գ.Ակունք 12փ. 1 տուն

Գործունեությունը՝ ***Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի Հ. Աճառյանի փողոց, Հ.42/5 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Թարգյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000059

«05» 08 2020թ.

Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի Հ. Աճառյանի փողոց, Հ.42/5 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս.

Ձեռնարկող՝	Արմինե Պետրոսյան
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Գ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	ք. Երևան, Ավան վարչական շրջան

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրը նախատեսվում է իրականացնել ք. Երևան, Ավան վարչական շրջան, Հ.Աճառյան փող. 42/5 հասցեում:

Գործունեության նպատակն է կառուցել ժամանակակից բազմաբնակարան բնակելի համալիր:

Հողամասը գտնվում է Աճառյան փողոցի և Աճառյան փողոցի 2-րդ փակուղու միջանկյալ հատվածում: Հողմասի մակերեսը 10800.0 քմ է: Նպատակային նշանակությունը, ըստ անշարժ գույքի իրավունքների պետական գրանցման վկայականի, բնակավայրերի է, իսկ գործառնական նշանակությունը՝ խառը կառուցապատման: Ըստ նախագծի, ամենամոտ բնակելի շենքը գտնվում է 53.0 մետր հեռավորության վրա: Արևելյան մասում՝ հարևան հողամասում առկա կիսակառույց երկհարկանի շինությունից ամենամոտ շենքը նախագծված է շուրջ 24.0 մետր հեռավորությամբ, հյուսիսային հատվածում առկա է 9 հարկանի բնակելի շենք և նախատեսվող բնակելի շենքի միջև հեռավորությունը կազմում է 60 մետր:

Նկարագրական մաս. նախագծի համար հիմք է հանդիսացել պատվիրատուի հայտը, անշարժ գույքերի սեփականության իրավունքի գրանցման N 28112019-01-0040 վկայականը, Երևանի քաղաքապետի կողմից 08.05.2020 թ.-ին տրված N.01/18-07/1-Պ-498-400 նախագծման թույլտվությունը (Ճարտարապետահատակագծային առաջադրանք):

Տարածքը նախկինում եղել է կառուցապատված: Նախատեսվում է իրականացնել գոյություն ունեցող շինությունների ապամոնտաժման և քանդման աշխատանքներ: Շինությունների ապամոնտաժման և քանդման աշխատանքների արդյունքում առաջանում է 84 խմ ծավալով շինարարական աղբ:

Համաձայն նախագծման թույլտվության նախատեսվում է կառուցել 4 բազմաբնակարան բնակելի շենքեր /«Ա», «Բ», «Գ», «Դ» մասնաշենքեր/ և 1 առևտրի կենտրոն: Բնակելի շենքերից 3-ը ունեն նկուղային, կիսանկուղային և 16 վերգետնյա հարկայնություն, իսկ 4-րդը, որը ամենամոտն է Աճառյան փողոցին՝ 14 վերգետնյա հարկայնություն: Առևտրի կենտրոնը երկհարկանի է՝ տեղակայված հարևան հողամասում առկա ցածրահարկ շենքերի կառուցապատման գծով: Առևտրի կենտրոնի հարթ տանիքը շահագործվող է և օգտագործվելու է որպես բակային տարածք բնակելի շենքի համար:

Շենքերի ստորգետնյա հարկերը հիմնականում նախատեսված են ավտոկայանատեղիների համար, ինչպես նաև էլեկտրովահանների, ջրի պահոցների և պոմպակայանների համար: Յուրաքանչյուր շենքում նախատեսվում է 2 վերելակ՝ համապատասխանաբար 480կգ և 1000կգ բեռնունակությամբ: Հաշվի առնելով, որ շենքերի բարձրությունը գերազանցում է 28 մետրը՝ աստիճանավանդակը նախագծված է չծխապատվող Զ1 տիպի:

Ավտոկայանատեղիների և բնակելի հարկերի ընդհանուր օգտագործման միջանցքները ապահովված են ծխահեռացման համակարգով:

Բնակարաններից յուրաքանչյուրը ապահովված է բացօթյա պատշգամբով: Բնակարանների ջեռուցումը և տաք ջրամատակարարումը իրականացվելու է բնակարաններում տեղադրվող գազով աշխատող տուռբո կաթսաների միջոցով:

Բնակարանների արտաքին պատերի շարվածքի համար նախատեսված է բետոնե բլոկների երկտակ շարվածք /200+100/ միջնամասում 50-60մմ հաստությամբ կոշտ ջերմամեկուսիչով, իսկ արտաքինից՝ ցեմենտ-ավազե շաղախով և մետաղյա ցանցով ամրանավորված երեսապատման 30մմ հաստությամբ տուֆե սալերով: Երեսապատման սալերը յուրաքանչյուր երկու հարկը մեկ առանձնացված են լինելու դեֆորմացիոն կարանով: Շենքերին հարող տարածքները բարեկարգվելու և կանաչապատվելու են, միջբակային տարածքում իրականացվելու է թվով 2 սպորտային խաղահրապարակ:

Համալիրի տեխնիկատնտեսական ցուցանիշները հետևյալն են՝

-ստորգետնյա հատվածի ընդհանուր կառուցապատում՝ 4573.41 քմ.,

-վերգետնյա մասի /բնակելի շենքերի/ կառուցապատման մակերես՝ 2785.16 քմ.,

-մեկ շենքի կառուցապատման վերգետնյա մակերես՝ 696.29 քմ.,

-հասարակական սպասարկման օբյեկտի կառուցապատման մակերես՝ 1061.49 քմ.,

-բնակելի շենքերը միատիպ են, տիպարային հարկի մակերեսը հաշվարկված արտաքին պատերով կազմում է 696 քմ.՝ յուրաքանչյուր հարկում թվով 7 բնակարան,

-բնակարանների ընդհանուր քանակը՝ 406 հատ,

-ստորգետնյա ավտոկայանատեղիներ՝ 214 հատ,

-վերգետնյա բացօթյա ավտոկայանատեղիներ՝ 40 հատ,

-ստորգետնյա մասի շինարարական մակերես՝ 8962.6 քմ.,

-ընդհանուր համալիրի շինարարական մակերես՝ 54255.5 քմ.,

-Կանաչապատվող տարածքներ՝ 4300 քմ. /հողամասի նկատմամբ՝ 40%/:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումն իրականացվելու է Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված կանաչապատման նախագծի համաձայն:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական ինդուստրիայի ձեռնարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից: Շաղախը և բետոնը կառաքվեն Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Առաքումը ծրագրվում է այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի աշխատանքների անընդհատությունը:

ՓՈՐՁԱՂԵՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ЭКСПЕРТНЫЙ ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS
ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
РА ЕРЕВАН ГОРОДСКОЕ ПРАВИТЕЛЬСТВО

Առաջարկվում է շինարարության նյութատեխնիկական մատակարարման հետևյալ սխեման.
- առանձին ամրանային ձողերը և հիմնակմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերը ավտոմոբիլային փոխադրամիջոցներով բերվում են անմիջականորեն շինարարական հրապարակ, որտեղ կատարվում է դրանց պահեստավորում և տեղադրում,
- շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և վերանորոգումը իրականացվում են մասնագիտացված կետերում,
- օբյեկտի ընդհանուր կոմպլեքսի շինարարության նորմատիվ տևողությունը ծրագրվում է 54 ամիս՝ շինարարական աշխատանքների կատարման համար թույլատրման տրամադրման օրվանից:

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունը կարելի է իրականացնել ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում՝ վաճառակալել դրանք այլ կազմակերպություններից:

Հողային աշխատանքները նախատեսվում է իրականացնել մեքենայացված եղանակով՝ KOMATSU PC 400-7 կամ Hyundai 170W տիպի էքսկավատորով, դժվար հասանելի մասերում՝ ձեռքով:

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը կիրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքների ընթացքում, կենցաղային աղբն է՝ 25920 կգ, որը կտեղափոխվի մոտակա աղբավայր:

Շինարարության ընթացքում առաջացող շինարարական աղբը՝ մոտ 187խմ (այդ թվում շինությունների քանդումից առաջացող) անմիջապես բարձվելու է ավտոինքնաթափերը և տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Բնակելի համալիրի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի միանալով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ ցանցին:

Շինարարության փուլում տեխնիկական և խմելու ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով՝ ավտոցիստեռներով և տարաներով:

Աշխատողների կենցաղային պայմանները ապահովելու համար կտեղադրվեն բիոզուգարաններ:

Կանաչապատ տարածքների ոռոգումը իրականացվելու է տարածքի հարևանությամբ անցնող ոռոգման ցանցից կամ ավտոցիստեռներով՝ նախապես կնքելով պայմանագիր:

Շինարարական աշխատանքների անվտանգությունն ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել անվտանգության տեխնիկական հրահանգի բոլոր պահանջները:

Համաձայն նախնական գնահատման հայտի, տարածքում բնության և պատմամշակույթային հուշարձաններ չկան: Հողաբուսաշերտը և ծառաթուփային բուսականությունը բացակայում է:

Նախատեսվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր՝
- շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում իրականացվելու է ջրցան,
- պարբերաբար ստուգվելու է շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացվելու է կարգավորում,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը իրականցվելու է փակ ծածկով մեքենաներով.
- սորուն նյութերի պահեստները ծածկվելու է համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանը գտնվում է շինարարական հրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասե 25խմ ծավալով տարողություն, որի ծավալը ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 500քմ մակերեսով տարածքի վրա: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ,
- շինարարական նյութերը տեղադրվելու են բետոնապատ մակերեսի վրա,
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի: Նախատեսվող կանաչապատման աշխատանքների համար անհրաժեշտ կլինի բուսահողի լիցք, որի ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումը կիրականացվի գործող օրենսդրության պահանջներին համապատասխան,
- հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպվելու է ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում օգտագործվելու են ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործվելու են տեխնիկական նորմալ վիճակում,
- մշակվելու և իրականացվելու են վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը,

Բնակելի համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղված հետևյալ մշտադիտարկումները.

- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- փոշենստեցման նպատակով տարածքի և ավտոճանապարհների ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրեկան 2-3 անգամ,
- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ;
- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար, իրականացնի աճի և կպչողականության զննումներ:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան մասհանել 360 հազ. դրամ, ամբողջ շինարարաության ընթացքում՝ 810000 հազ. դրամ:

Պատճառաբանական մաս. Երևան քաղաքում օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության

ստորաբաժանումները, ինչպես նաև՝ քաղաքաշինական կոմիտեն և առողջապահության նախարարությունը:

Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ, ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում՝ ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:
- Կառուցապատման հետագա գործառույթները իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համաձայն, մասնավորապես՝ ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 14-ի 263-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի համաձայն՝ պահպանելով շինհրապարակի աշխատանքային անվտանգության կանոնները, բանվորների արտահագուստի և հիգիենայի պահանջները:
- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:
- Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
- Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված կանաչապատման աշխատանքների իրականացումը և պահպանումը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Արմինե Պետրոսյանի կողմից Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի Հ. Աճառյան փողոց, Հ.42/5 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ Հ. Մեսրոպյան